զովուրդն՝ անէծ զնա, որ զկնի արքեպիսկոպոսին ծնրադրեսցէ (1)։ Վասն որոյ առաւել ցասուցեալ ժողովուրդն ի վերայ արքեպիսկոպոսին, զի զղաւանութիւն արարեալ էր, և ի նուիրակէն ոչ երկնչէր, փակեցին զդրունս աթոռական եկեղեցւոյն. զոր տեսեալ արքեպիսկոպոսին զանօրէնութիւն նոցա ընդդէմ կանոնացն արարեալն.. — (այսպէս թողած է օրինակողն)։

1632· ՌՁԱ· Նիկողայոս արքեպիսկոպոսն Լէօպոլսի Հայոց առեալ ի Վլատիսլաւէ Սիկիզմունտէ թագաւորէն Լեհաց զճանապարհագիր, գայ ի Հռոմ առ Ուրպանոս փափն, տալով նմա զպարտական հնազանդութիւն. զոր մեծաւ պատուով ընկալաւ Սրբազան Փափն. շնորհեաց նմա զեմիփորոն արքեպիսկոպոսեան, և կոնտակաւ մակագրեաց զնա արքեպիսկոպոս Լէօպոլսի և բոլոր թագաւորութեան Լեհաց և Մեծի դքսութեան Լիթվանիայ՝ ազգին Հայոց։ Եւ այսպէս մեծարեալ դառնայ յաթոռն իւր։

1636· ՌՁԵ· Խոճայ Սէչովցի Յակոբչայի որդիքն՝ Վարդանն, Սահակն և Յոնիկն, զԼէօպոլսի դպրատան հաստակառոյց պարիսպն, և զդուռն Ս. Խաչի եկեղեցւոյն՝ ի հիմանց շինեցին յայսմ ամի. որպէս յարձանէն սեաւ մարմարիոնէն երեւի։

1638· ՌՁԷ· Առ Վլատիսլաւ թագաւորն Լեհաց՝ յայսմ ամի՝ յուլիսի 23, գրեցին խնդրելով զպաշտպանութիւն նորա ի վերայ կրօնին իւրեանց՝ որ յԱսպահան՝ Հարքն Կարմելիտայք Բոբիկք. զոր և ընկալան ի Շահ Սոֆիէն՝ յամի Տեառն 1647, Նոյեմ. 9, կոնտակաւ, ոչ միայն վասն Կարմելիդայից՝ այլ եւ առաւել Եզուիդայից միսիոնարաց, հաստատեաց։

1639· ՌՁԸ· Լէօպոլսեցիք՝ իբրեւ անօգնական մնացին ի Մովսիսէ կաթողիկոսէն, ապաւինին առ Փիլիպպոս կաթողիկոսն, յորմէ հազիւ զկնի երից ամաց ընդունին զպատասխանին, 1638· հոկտ. 12, յԱսպահան գրեցեալն. որով յորդորէ զայլ քաղաքացիսն օգնել նոցա, զսակաւ ինչ յոյս տալով. վասն որոյ ընդ Պատրի (Հայր) Պողոսին Բիրոմալլի՝ զգլխաւորութիւն սմանց ի վերայ պրակաց հաւատոյ և սխալութեանց ոմանց՝ ի գրի հաստատեալք, առաքեն զնոյն Պատրին առ Ուրպանոս Փափն՝ յայսմ ամի, ուլիսի 2. Թերեւս հրամայեսցէ արքեպիսկոպոսին թոյլ տալ նոցա մնալ յառաջին կրօնն։

1640· ՌՁԹ· Արդ, Ուրպանոս Փափն գրէ թուղթ առ թագաւորն Լեհաց յայսմ ամի, ուլիսի 16, խնդրելով՝ զի օգնեսցէ Նիկողայոսին. և առ Փիլիպպոս կաթողիկոսն, յորդորելով զսա բազում վկայութեամբք և օրինակաք, մանաւանդ Ս. Գրիգորի Լուսաւորչին՝ ընդ Ս. Սեղբեստրոսի փափին, և Ֆլորէնդիու Ս. Ժողովոյն միաբանութեամբն, զալ յուղղափառութիւն։ Յանձն

1. Կարծուի թէ օրինակողն մոռցեր է այս տեղ դրել քանի մի բառ։